



ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՌՈՒԲԷՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
(1913 - 1999)

Երուսաղէմի Ս. Աթոռոյ վաստակաշատ եւ երեց Միաբաններէն Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան իր մահկանացուն կնքեց Հատասա հիւանդանոցին մէջ Ռրբաթ 19 Նոյ. 1999-ին:

Կիրակի կէսօրէ ետք ժամը 4-ին հանգուցեալին մարմինը բեր- ուցեալ Սուրբ Յակոբեանց Մայր Տաճար եւ կատարուցաւ Տան կարգ:

22 Նոյեմբեր 1999-ին Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Սուրբ Պատարագ մատոյց Տ. Վանիկ Վրդ. Մանկասեան:

«Ողջոյն»էն առաջ կատարուցաւ վերջին օծման կարգը: Պատրիարք Սրբազանը կատարեց վերջին օծումը եւ խօսեցաւ դամբանականը:

Ժամը 10:30-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխատրութեամբ Մայր Տաճարին մէջ կատարուցաւ հանգստեան կարգ, ապա թափօրը չորս անգամ կանգ առնելով, հոգեւոր երգերով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցումով, հանգուցեալին մարմինը ուսամբարձ յառաջացաւ Սուրբ Փրկիչ, միաբանից գերեզմանատունը:

Ժառանգաւորաց վարժարանի սրահը հոգեւորձ մատուցուցեալ:

Թաղապետ Պրն. Կարապետ Յակոբեան ցաւակցութիւն յայտնեց Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան:

Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան, աւագանի անունով Արսէն. ծնած է Նոր Զուլա 5 Նոյ. 1913-ին բարեպաշտ ընտանիքի մէջ:

Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն ազգային վարժարանին մէջ ապա մեկնած է Կալկաթա իր ուսումը շարունակելու. սարկաւազ ձեռնադրուած է 1968-ին հանգուցեալ Հայկազուն Արքեպս. Արքահամեանէ:

1972-ին Երուսաղէմ եկած եւ աշակերտած է Ժառանգաւորաց վարժարանի ընծայարանին:

1976-ին Երուսաղէմ Սուրբ Էջմիածնայ մատրան մէջ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է:

Գաւազանի իշխանութիւն ստացած է 1986ին: Պաշտօններ ստանձնած է իբրեւ Ժամօրինող, Տպարանի Տեսուչ եւ Տնօրէն Ժողովի անդամ:

ՎԱՆԻԿ ՎՐԴ. ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ